

Նոր երեցփոխի համար հաշվետեսներ ընտրեցին պ. պ. Ար. Շապու-
վախան, Պե. Սալաղձեան և Մ. Քաթենիքեան, որոնք նոյնպէս պատա-
ւոր փաձառակաճներ և եռանդուն մարդիկ են:

Մօտ ժամանակներումս աչտեղ բացեց մի գրադարան-ընթերցա-
րան, որ բաւականին հարուստ է լաւ լաւ գրքերով, ստացում են թիֆ-
լիսից երկու օրագիրներ և մտադիր են ստանալ «Մուրճ» ամսագիրը: Լուր
է տարածել, որ տեղիս հաշիւը ցանկանում են կովկ. հաշոց Բար. ընկե-
րութեան ճիւղ ունենալ աչտեղ: Մօտ ժամանակներում կունենանք հե-
ռախօս (տելեֆոն), ելեքտրական լուսաւորութիւն և ջրանցք: Կաշխատեմ
աչտեհետեւ շարունակաբար տեղեկութիւններ տալ աչտեղի ղէպքերի մա-
սին պատեական «Մուրճ»-ի ընթերցողներին:

թ.

P. S. Աչտեղ էլ երբեմն երևում են մեծ ապատիւ մուրաց-
կաններ, որոնք հասարակութեանը զգեցնելուց չետոյ հեռանում են,
թողնելով իրանց փոխանորդներ՝ սկսած գործը շարունակելու: Մի օրինակ.
չունարի 14-ին մի պարոնի անւանակոչութեան տօնն էր, որտեղ բաւա-
կանին մեծ թւով հիւրեր կալին. սրանցից մէկը ներկա էրողներից, առանց
բացառութեան, երեքական ուրբի հաւաքեց, չգիտենք ինչ նպատակով.
երբ նրանից հարցնում էին թէ ինչ բանի համար է, պարոնը պատասխա-
նում էր թէ «վերջը կիմանաք»: Մինչև այժմ մեզ չաչտնի չէ թէ ինչ եղաւ
մեր աւած փողերը, որ մօտ 60 բուրլի կը լինի:

թ.

II

ԵՍԵՆԹՈՒԿԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՁՐԵՐԸ

(Մենք ստացանք Մոսկուայից, բժիշկ Մ. Ջերնովից հետեւալ նամակը,
գրած ուսերէն, որի թարգմանութիւնը ահա):

Մեծարդոյ պ. Խմբագիր, թոյլ տւէք չուսալ, որ Գուք չէք զլանալ
Ձեր համակրութիւնը և պաշտպանութիւնը Եսսենթուկի հասարակաց ձեռ-
նարկութիւններին և չէք թողնիլ մեր ընթերցարանը առանց Ձեր չար-
գելի հրատարակութեան լընթացս ամառաւ ամիսների 15-ից մալիսի մինչ
մէկն օգոստոսի:

Եսսենթուկի հասարակաց հաստատութիւնները դեռ ևս չեն հասել
աչն նիւթական անկախութեան, որով նոքա կարող լինէին ապրել առանց
բարի և ղէպի նոցա լաւ տրամադրած անձերի օգնութեան: Մագած լի-
նելով 1891 թ., մի բժշկի նախաձեռնութեամբ, կամաւոր նւիրարերու-

թիւններով, դռքա, շնորհիւ նորա եռանդին, ներկայումս ունեն լաւ գրադարան ուսաց և ֆրանսիական լաւագոյն գրականական շարադրութիւններին բաղկացած, մանկական գրքերի բաժանմունքով, և մի հասարակաց ազգի, որը հիւանդների համար ամառաւին ակումբի տեղ է ծառայում: Այդ ազգին կապալով է վերցրած մի քանի տարով և չարմարեցրած է ամեն սեռակ խաղերի և երեսխաների թէ հասակաւորների պարապմունքների համար, սկսած կրօնէսից և գիմնաստիկալից մինչև շախմատը և հրացանաձգութիւնը: Այս բոլորը թողնւած է լաճախողներին ձրի օգտելու համար և սարքում է ու պահպանւում կամաւոր նւէրներով: Սկսած 1891-ից մինչ 93 թւականը նւէր ստացւած է 2605 ուրբլի, մսխած է 4282 ու, պարտք մնում է 1677 ուրբլի:

Բայց ամենից շատ ժողովրդականութիւն վայելում է հիւանդների շրջանում ընթերցարանը, որը իւր գոյութիւնով պարտական է բացառապէս համակրութեանը և բարութեանը օրագիրները և ամսագիրներ ի հրատարակիչներին և խմբագիրներին: Մենք Ձեզ մշտ առանձնապէս շնորհակալ ենք ի դիմաց մեր բոլոր պացիէնտների: Մեզ ուղարկում են մինչ 40 հրատարակութիւններ Ռուսիայի զանազան կողմերից, բայց մանաւանդ արևմտեան նահանգներից:

Ներկայ սեզոնից Նսենթուկը հարստանում է մի նոր հասարակական հիմնարկութիւնով: Մեզանում բացւում է գիտական բժշկական լաբորատորիա՝ մանրադիտական և քիմիական հետազոտութիւնների համար: Նորան կառավարելու համար հրաւիրւած են երկու բժիշկ, որոնցից մէկը մասնագէտ քիմիկոս է, աչն է Մոսկւայի համալսարանի լաբորատոր: Այսպիսով հիւանդին ուսումնասիրելու և նորան դիտելու գործը Նսենթուկում զրւած կը լինի գիտութեան նորագոյն պահանջների համեմատ:

Եւ առհասարակ այս տարւանից Վովկասեան Հանքալին Ջրերի համար նոր շրջան է սկսում:

Միշտ աւելի ու աւելի է լիչւում թէ ինչ է գրել նոցա մասին չալտնի եւրոպական հեղինակութիւն Ժ. Ֆրանսուա իւր ղեկուցման մէջ Պարիզի գիտութիւնների ակադեմիայում:

«Ոչ մի տեղ աշխարհին երեսին չկալ մի աչնքան բաղդաւոր միաւորութիւն, համեմատապէս փոքրիկ տարածութեան վրալ աչնքան բաղդատեսակ, գեղեցիկ, առողջացնող աղբիւրներ, որքան Վովկասեան Հանքալին Ջրերի շրջանում (1876):

Ալժմ աւելի ու աւելի ցաւում են, թէ քանի քանի միլիոն ուրբլի է վճարում Ռուսիան Եւրոպայի կուրորաների (բժկական տեղերի) բարդաւաճման և պահպանութեան համար: Մինչ 50 հազար հոգի ամեն տարի մեր հալրենակիցներից բժշկւում են աչնտեղ, իրանց հետ տանելով մինչ 50 միլիոն ուրբլի (ենթադրելով մի հոգու համար 1 հազար ուրբլի) (տես Вибл. врача, 1894 թ. № 3):

Եւ վերջապէս աչտ տարի բժշկիչները մատուցին Պետական կալած-
 ների միջխտար պ. Երմոլովին մի զեկուցում, որի մէջ նոքա պարզեցին
 Նսենթուկի կուրորտի բոլոր կարիքները հետեւեալ կէտերում.

1) Շինել մի նոր վաննայի շինութիւն բաւական թւով վաննաներով:
 2) Շինել հիգիւսպատիկական տուն բոլոր նորագոյն դուշերով, աւա-
 զաններով, շրթով և ալն: և ալն:
 3) Շինել կուրգալ՝ վատ եղանակին ժամանակ անցկացնելու բոլոր
 չարմարութիւններով:

4) Արքունական ճաշարանը տալ կապալով ոչ թէ մի ալ մի քա-
 նի մի տարով չտալի անձի, պալմանով որ նա մատակարարէ աժան և
 լաւ ճաշ (որ շատ հեշտ է, քանի որ ալնտեղ միսը ծախում է ֆունտը
 6 կոպ, 5 բաժակ կաթը 4 կոպէկ և ալն):

5) Մաքրել և տալ հասարակութեանը օգտելու արքունական մրգա-
 վին ապիւն, (որ ցալմ անմատչելի է և տրւում է կապալով 100 ռ.-ով),
 Անտառ գցել Счелочная гора կոչւած սարը և միացնել պառկի հետ: Աւելի
 լաւ է ծաղկանոցներ պահել և ալն:

6) Ենթարկել աչն շրջանը, որի մէջ բնակւում են հիւանդները,
 առանձին ճարտարապետական և սանիտարական կանոնների և հեշտաց-
 նել մասնաւոր նախաձեռնութիւնը մասնակցելու համար կուրորտի կեն-
 սական չարմարութիւնների զարգացնելու գործին:

Պ. Մինխտարը խոստացաւ ինքը լինել աչտ տարի Նսենթուկում և
 չախնեց լիակատար համակրութիւն կուրորտի կարիքներին:

Ձեզ չարգող Մ. Ջերնով